ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2023 թվականի N 1946-Ն

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՎԹԱՐԻ ԿԱՄ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԿՈՐՍՏԻ ՓԱՍՏԸ ԿԱՄ ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ) ԵՎ (ԿԱՄ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԿՈՐՍՏԻ ՓԱՍՏԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական միության 2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Միության մաքսային օրենսգրքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի 8-րդ, 9-րդ կետի 1-ին, 11-րդ կետի 3-րդ, 153-րդ հոդվածի 3-րդ կետի 6-րդ և 224-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետերով և «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 190-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական

կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

10.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ